ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԵՎ ՊՈՆՏԱՀԱՅԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՆ ՈՒ ԹՎԱՔԱՆԱԿԸ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

Բ. Դ. ԹՈՒԼԱՔՅԱՆ (Սոչի)

Պոնտական կայսրության վերջնական անկումից (1461 թ.) առաջ և հետո Սև ծովի այդ երկրամասում (Պոնտոս) բնակվում էին հայկական երկու ինքնուրույն հատվածներ՝ կիսանկախ, երբեմն համարյա ինքնիշխան Համշենը, Սյուրմենե գավառը (Սև գետ), նրա հարակից Յոմուրա վիճակի գյուղերը, որոնք կազմում էին համշենահայությունը և Տրապիզոնից Սինոպ ամբողջ տարածքի վրա ու Գյումուշխանե գավառում բնակվող հայերը, որոնց տեղի պատմական անունով ընդունված է պոնտահայեր անվանել։

XVII—XVIII դարերի ընթացքում համշենահայերին բռնությամբ իսլամացնելու նպատակով Բուրք իշխանության ու մոլեռանդ կրոնականների գործ դրած գազանությունների հետևանքով համշենահայերի մեծ մասը, ֆիզիկական բնաջնջման ահից, յաթաղանի ու սվինի սպառնալիքի տակ ընդունեց մահմեդական կրոնն ու կառչած մնաց հայրենի օջախներին։ Նրանք, ովքեր հաստատ մնացին ազգային ու կրոնական հավատալիքներին, լքեցին իրենց պապենական ոստանները, սփռվեցին Տրապիզոնից-Սամսոն, կուսական անտառներ դարձած լեռնաշխարհում։ Նրանցից շուրջ 150—200 ընտանիք բնակություն հաստատեց Տրապիզոն քաղաքում։

Նույն նահանգում հայկական երկու ինքնուրույն ազգագրական ու բարբառային ճյուղ լինելու առկայությունն է, որ թելադրել է Տրապիզոնի նահանգում՝ Պոնտոսում բնակվող հայերին բաժանել երկու խմբի ու անվանել համապատասխան հատկանիշներով՝ «համշենահայեր» և «պոնտահայեր», թեպետ իրենց զբաղեցրած երկրամասով համշենահայերը նույնպես պոնտահայեր են։

1915 թ. Տրապիզոնի նահանգի (պատմական Պոնտոսի ու Ճանիկի մեծ մասը) վարչական կենտրոնը՝ կուսակալանիստ քաղաքը Տրապիզոնն էր։ Նահանգը բաժանված էր 4 գավառների (սանջակ)՝ Սամսոնի (Ճանիկի), Տրապիզոնի, Լազիստանի (կենտրոնը՝ Ռիզե), Գյումուշխանեի։ Գավառները բաժանվում էին գավառակների (գազա), որոնք էին. Սամսոն գավառում՝ Բաֆրա, Չարշամպա, Թերմե, Ունիե, Ֆաթսա, Կավախ։ Տրապիզոնի գավառում՝ Օրդու, Կիրասոն, Կյուրեզն, Վագֆը-Քեպիր, Ագչեապատ (Պլադանա), Սյուրմենե, Օֆ։ Գյումուշխանեի գավառում՝ Թորուլ (Արտասա), Քելբիթ, Շեյրան, Լազիստանում՝ Աթինա, Խոփա, Համշեն։

Եղեռնին նախորդած տարիներին Տրապիզոնի նահանգում բնակվող հայերի թվաքանակի մասին հրատարակված պաշտոնական ու ոչ պաշտոնական աղբյուրների տվյալները չափազանց հակասական են։ Այսպես, 1900 թ. մարդահամարի տվյալներով Տրապիզոնի վիլայեթում բնակվում էր մոտավորապես 1200000 մարդ, որոնցից թուրքեր ու լազեր՝ 690 հազար, հույն քրիստոնյաներ՝ 200 հազար, կրոնափոխ հույներ՝ 100 հազար, օտարականներ՝ 30 հազար, չերքեզներ, լեռնցիներ և վրացիներ՝ 30 հազար, խալդեր՝ 30 հազար, կրոնափոխ հայեր՝ 60 հազար, հայ քրիստոնյաներ՝ 60 հազար[2]։ 1908 թ. թուրքական Սալնամեի (տարեցույց, մարդահամար) համաձայն, նույն թվականին Տրապիզոնի նահանգն ուներ 1.387.164 ազգաբնակչություն, որից 1114014-ը՝ թուրքեր, 222309-ը՝ հույներ ու 46789-ը՝ հայեր[3]։ Հ. Խանջյանը «Աշխարհագրու-

---

1 *Տրապիզոնի նահանգը ներկայումս բաժանված է վեց ինքնուրույն վիլայեթների (նահանգ), որոնք են՝ Սամսոն, Օրդու, Կիրասոն (որին միացվել է Շապին-Գարահիսարը), Տրապիզոն, Ռիզե (նախկին Լազիստան գավառը) և Գյումուշխանե։ «Ժամանակակից Թուրքիան», Երևան, 1967, էջ 414 և 12-րդ էջի ներդիր քարտեզը։ Տե՛ս նաև Հ. Խանջյան, Աշխարհագրություն օսմանյան կայսրության, Կ. Պոլիս, 1912։ Գրքում չէին հիշվել Սամսոն գավառի Կավախ ու Ֆաթսա գավառակներն ու Լազիստանի Համշեն գավառակը։*

2 *Տե՛ս Մ. Թուլաքյան, Օրերուս հետ, Պեյրութ, 1963, էջ 280։*

3 *Տե՛ս Արշակունի (Հ. Հովակիմյան), Պատմություն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967, էջ 27։*

թյուն օսմանյան կայսրության» դասագրքում 1912-ին նահանգի ամբողջ բնակչության թիվը ցույց է տալիս 950000, առանց ազգային բաժանումների[4]։ 1912 թ. հրատարակված «Ոսկի բարեկամ» գրքում Գ. Մանգակունին նշում է, որ Տրապիզոնի նահանգում բնակվող հայերի թիվը կազմում է 100 հազար[5]։

Թեոդիկի 1922 թ. «Ամենուն տարեցույցում» ասված է. «Եղեռնից առաջ Տրապիզոնի նահանգում հաշվվում էր 65000 հայ, որոնցից եղեռնից հետո վերապրեց 15000 շունչ»[6]։ Հայկական ՍՍՀ Ատլասի (1961 թ.) տվյալներով Տրապիզոնի նահանգում 1914-ին ապրում էր 65000 հայ։ «Հուշամատյան մեծ եղեռնի» գրքում կարդում ենք. «Տրապիզոնի սանջակը (ոչ թե նահանգը—Բ. Թ.)՝ կհաշվվեր շուրջ 60 000 հայ բնակչություն, որից 14 հազարը կբնակվեր Տրապիզոնում։ Նույն գրքում ասված է. «Առաջին աշխարհամարտի նախօրյակին Սամսոն կհաշվվեր 5000 հայություն, հույներ՝ 10000, թուրքեր՝ 15000»[7]։ Լեփսիուսի տվյալներով, Տրապիզոնի նահանգում եղեռնից առաջ ապրում էր 53000 հայ, որոնցից Տրապիզոնի գավառում՝ 32700, Սամսոնի գավառում՝ 20300[8]։ Տրապիզոն քաղաքում եղեռնի նախօրյակին 14000 հայ բնակիչ լինելը հաստատում է այդ ողբալի օրերին Տրապիզոնի իտալական հյուպատոս Կոռինին. «Տրապիզոն քաղաքի 14 հազար հայ բնակչությունն ամբողջովին ոչնչացվեց, միայն շատ քչերին հաջողվեց խուսափել ջարդարարների ճանկերից»[9]։ Տրապիզոն քաղաքում 14 հազար հայ բնակչություն լինելը վկայում է նաև Հանրի Բարրին[10]։

Ակադ. Հ. Աճառյանը «Քննություն Համշենի բարբառի» գրքում հաղորդում է. «...բոլոր համշենցի հայոց թիվը լինում է... շուրջ 20000 շունչ, որոնցից հայտնի չէ, թե ինչքանը կենդանի մնաց։ Նույնքան կամ ավելի կարելի է դնել մահմեդական հայերին։ Իսկ Կովկաս, Սև ծովի եզերքը և Կուբան գաղթած համշենցոց թիվը կլինի 60000-ից ավելի»[11]։

Համշենահայերի թվաքանակի մասին հայտնած այս տվյալները առանձին պարզաբանման կարիք ունեն։ Գրքի առաջաբանում Հ. Աճառյանը հաղորդում է. «Համշենի բարբառը ուսումնասիրելու նպատակով 1910 թ. ամառը ես գնացի Տրապիզոն, ուր մնացի երկու շաբաթ։ Այնտեղ ես շրջապատվեցա Մալացի, Ապկիոնցի, Կյուշանացի (իմ հայրենի գյուղը—Բ. Թ.) և Ճոշարացի գյուղացիներից և ուսուցիչներից... 34 տարի անց, Երևանում առիթ ունեցա ծանոթանալու բժշկական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող Արտաշես Էքսուզյանի հետ..., որը շատ լավ գիտեր և խոսում էր Համշենի բարբառը։ Կիսատ ու թերի թողած աշխատությունս ձեռնարկեցի լրացնել և ընդարձակել...»։ Բազմավաստակ գիտնականի գլխավոր նպատակը եղել է համշենահայ բարբառը ուսումնասիրելը։ Վիճակագրական հարցերով նա հետաքրքրվել է ըստ հնարավորության։ Գրքի 9-րդ էջում, «Կոտորածներից առաջ» ընդհանուր խորագրի տակ հեղինակը թվում է Տրապիզոնի նահանգի հայկական բնակավայրերն ու բնակչության թվաքանակի մասին հավաքած տվյալները, որոնց ամփոփումը տալիս ենք № 1 աղյուսակում։

Եթե բերված թվերը ընդհանուր հայտարարի վերածենք, այսինքն այնտեղ, որտեղ քանակը ցույց է տրվել միայն տներով, փոխարինենք շնչով (անձով), յուրաքանչյուր ընտանիքի (տան) անդամների թիվը քաղաքներում 6, իսկ գյուղերում 7 շունչ հաշվելով, կստացվի հետևյալ պատկերը (տե՛ս աղ. № 2)։

Մեծ գիտնականը իր լայնածավալ գիտական աշխատանքներին զուգահեռ հավաքել ու մեզ թողել է Տրապիզոնի նահանգի (Պոնտոս) գյուղերի (որոնք համարյա ամբողջությամբ համշենահայեր են) ու քաղաքների բնակիչների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ։ Սակայն վերևում բերված նրա վիճակագրական տվյալները բավականին թերի են։

Պատահական չէ, որ հեղինակը, նշելով պատերազմից առաջ նահանգում (Տրապիզոն) 20000 համշենահայ լինելու մասին, ոչինչ չի ասում քաղաքներում ապրող հայերի մասին, իսկ

---

4 Տե՛ս Հ. Խանջյան, նշվ. աշխ., էջ 24։

5 Տե՛ս Գ. Մանդակունի, Ոսկի բարեկամ, Տփղիս, 1912, էջ 830—831։

6 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 262։

7 «Հուշամատյան Մեծ եղեռնի», Բեյրութ, 1965, էջ 465։

8 Տե՛ս „Геноцид армян в Османской империи", Сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, էջ 404։

9 Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմն ու արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 301։

10 Տե՛ս „Геноцид армян в Османской империи", էջ 404։

11 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 10։

Աղյուսակ 1

Տրապիզոնի նահանգի հայաբնակ վայրերն ու բնակչության թիվը 1915 թ. կոտորածներից առաջ, ըստ Հ. Անառյանի տվյալների:

Վարչական շրջաններ, քաղաքներ, գյուղեր	Քաղաքներում		Գյուղերում		
	տուն	շունչ	գյուղ	տուն	շունչ
Տրապիզոն քաղաք . . .	800	—	—	—	—
Յոմուրա	—	—	10	—	2340
Սյուրմենե	—	—	12	100	—
Աղչեապատ (Պլաղանա) .	—	—	7	—	4000
Տրիպոլի	40	—	—	—	—
Կիրասոն	—	1500	—	—	—
Օրդու	—	400	—	—	—
Օրդուի գյուղերը	—	—	15	—	—
Սամսոն քաղաք	—	—	—	—	—
Սամսոնի գյուղերը . . .	—	—	30	—	2000
Այդ թվում՝					
Զարշամպա	—	—	—7	առանձին գավառակների մասին (տուն, շունչ) տվյալներ չկան	
Ունիե	—	—	—8		
Թերմե	—	—	—3		
Ֆաթսա	—	—	—2		

Աղյուսակ 2

Տրապիզոնի նահանգի հայերի թվաքանակը ըստ Հ. Անառյանի տվյալների

Վարչական շրջաններ, քաղաքներ, գյուղեր	Քաղաքներում		Գյուղերում		
	տուն	շունչ	քանի գյուղ	քանի տուն	քանի շունչ
Տրապիզոն քաղաք . . .	800	4800			
Յոմուրայի վիճակ . . .	—	—	10	385	2340
Սյուրմենե գավառակ . .	—	—	12	100	700
Աղչեապատ (Պլաղանա) .	—	—	7	572	4000
Տրիպոլի	40	240			
Կիրասոն	250	1500			
Օրդու քաղաք	67	400			
Օրդուի գյուղերը	—	—	15	—	—
Սամսոն քաղաք	—	—	—	—	
Սամսոնի գյուղերը . . .	—	—	30	2000	14000
Այդ թվում					
ա) Զարշամպայի գավառակ	—	—	17	Առանձին գավառակների բնակչության քանակի մասին տվյալները պակասում են։	
բ) Ունիեի »	—	—	8		
գ) Թերմեի »	—	—	3	—	—
դ) Ֆաթսայի »	—	—	2	—	—
Ընդամենը...	1057	6940	104	3057	21040

մի շարք քաղաքների մասին տվյալներ բոլորովին չի տալիս, ինչպես Սամսոնն ու Բաֆրան, իսկ Գյումուշխանե քաղաքն ու ամբողջ գավառը բոլորովին բաց է թողել։ Ինչ վերաբերում է համշենահայերի թվաքանակին՝ 20000 շունչ, ապա դա նույնպես մոտավոր է, քանի որ Օրդու գավառակի գյուղերի հայ բնակիչների քանակի մասին տեղեկություններ չկան, իսկ այլ շրջանների վերաբերյալ իրեն հաղորդված տեղեկությունները նույնպես թերի են։ Ամեն դրուցակից տվել է այն, ինչ կարողացել է, ինչ որ դիտեր կամ լսել էր։

Համեմատաբար ստույգ են Տրապիզոնի մոտակա գյուղերի մասին հաղորդված տվյալները։ Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է։ Նախ՝ որ հեղինակը անձամբ եղել է այդ վայրերում (Տրապիզոնում)։ Երկրորդ՝ նա լայն հնարավորություն է ունեցել երկար ղրույց ունենալ տեղի ուսու-

ցիչների հետ, հատկապես Յոմուրայի ու Սյուրմենեի։ Իսկ ով քիչ թե շատ ծանոթ է այդ վայրերին, նրան հայտնի է, որ Յոմուրայի համարյա բոլոր գյուղերը ապահովված էին ձեռնհաս ու նվիրված դասատուներով։ Շրջանի ուսուցչական միությունն ուներ «Գեղջուկ» անունով իր խմբագրատիպ, ապա տպագիր հանդեսը։

Ս. Ծոցիկյանը հաղորդում է. «Հայեր Տրապիզոնի մեջ ավելի քան 15000 կհաշվվեին մինչև 1915 թ. սկիզբը»[12]։

Սամսոնի հայկական դպրոցի ուսուցիչ Վ. Մինախորյանի հաշվումներով, եղեռնի նախօրյակին Սամսոն քաղաքում բնակվում էր 800—900 ընտանիք՝ 5000 շունչ հայ[13]։

Սամսոնցի Օթոն Հեքիմյանը «Սամսոնի հայության տխուր բաժինը 1915—1918 մեծ եղեռնին» գրքում Սամսոն քաղաքի հայերի թիվը ցույց է տալիս 6000 անձ։

Սույն հոդվածը պատրաստ էր, երբ «Բանբեր Երևանի համալսարանի» 1969 թ. № 2-ում տպագրվեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանի «Էջեր համշենահայ պատմությունից»[14] արժեքավոր հոդվածը։

Կարելի է ողջունել, որ վերջապես մեր ձեռնհաս պատմաբանները, հանձին Լ. Խաչիկյանի, ըստ արժանվույն սկսեցին զբաղվել արևմտահայության անբաժան մասնիկը կազմող համշենահայերի պատմությամբ։ Սակայն, ցավոք սրտի, Լ. Խաչիկյանը նախաեղեռնյան տարիների համշենահայերի թվաքանակի վերաբերյալ, որպես ամենաստույգը, ներկայացնում է Հ. Աճառյանի տեղեկությունները։ Լ. Խաչիկյանը գրում է. «Ստորև, առ ի չդոյե ավելի ստույգ տվյալների, մեջ ենք բերում այդ (Հ. Աճառյանի—Բ. Փ.) վիճակագրությունը, որ վերաբերում է առաջին աշխարհամարտին նախորդող ժամանակամիջոցին»։

Իրավացի կլինի՞, արդյոք, Հ. Աճառյանի ներկայացրած մասնակի տեղեկությունները ընդունել որպես ամենաստույգը։ Այդ մասին ասվեց վերևում։ Դա ավելի ակներև դարձնելու համար համեմատենք երկու հեղինակների՝ Թեոդիկի ու Հ. Աճառյանի տվյալները.

Աղյուսակ 3

Տրապիզոնի նահանգի հայերի թվաքանակը

Հեղինակների անունը	Եղեռնից առաջ	Եղեռնից հետո
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922 թ.	65000	15000
Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, 1947 թ.	26000, այդ թվում համշենահայեր՝ 20000, քաղաքներում՝ 6900	տվյալներ չկան

Թվելով նախաեղեռնյան ժամանակամիջոցում Տրապիզոնի նահանգում (Պոնտոս) բնակվող հայ բնակչության վիճակագրության վերաբերյալ վերևում բերված հակասական ու շատ անգամ իրարամերժ տեղեկությունները, հարց է ծագում, թե, արդյոք, որտե՞ղ է թաղված այդ խառնաշփոթության արմատը։

Վիճակագրական այդպիսի խճճվածության գլխավոր պատճառները հավանաբար հետևանք են հետևյալ հանգամանքների։

Տվյալներ հաղորդող հեղինակներից ոչ մեկը չի հիշատակում հայ կաթոլիկ ու բողոքական համայնքների թվաքանակը, իսկ այդպիսիք Տրապիզոնի նահանգում, հատկապես քաղաքներում (Տրապիզոն, Օրդու, Սամսոն) զգալի թիվ էին կազմում։ Այդ վայրերում նրանք ունեին ինքնուրույն ազգային մարմիններ, կրոնական հովվապետներ, եկեղեցի, ժողովարան, ուսումնարաններ։ Նրանք ուղղակի ենթակա ու հաշվետու էին իրենց վերադաս մարմիններին։ Թերևս ազգային այս հատվածները որոշ հեղինակներ դուրս են թողել ընդհանուր վիճակագրությունից։

Շատ հեղինակներ Տրապիզոնի նահանգի մասին խոսելիս բոլորովին չեն հիշում Գյումուշխանե քաղաքում ու գավառում բնակվող հայերի թվաքանակի մասին։ Մինչդեռ այդ գավառը Տրապիզոնի նահանգի անբաժան մասն էր։ Ոչինչ չի ասվել նաև Լազիստանում (ներկայիս Ռիզեի նահանգ)

---

12 Ս. Ծ ո ց ի կ յ ա ն, Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947։

13 Վ. Մ ի ն ա խ ո ր յ ա ն, 1915 թվականը, Վենետիկ, 1949։

14 Լ. Խ ա չ ի կ յ ա ն, Էջեր համշենահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2 (8), էջ 115։

բնակվող փոքրաթիվ հայերի վերաբերյալ։ Ասվածը վերաբերում է նաև Թեոդիկի հայտարարած վիճակագրական թվերին։

Տրապիզոնի նահանգը բաժանվել էր երկու ինքնուրույն առաջնորդական թեմերի՝ Ճանիկի ու Տրապիզոնի։ Վերջինիս մեջ մտնում էին Տրապիզոնի, Գյումուշխանեի ու Լազիստանի գավառները։ Քանի որ Տրապիզոնի թեմի առաջնորդը նստում էր կուսակալանիստ Տրապիզոն քաղաքում, ապա բացառված չէ, որ Տրապիզոնի առաջնորդարանի կազմած (առանց Ճանիկի թեմի) վիճակագրական տվյալները առանձին օտար (թերևս նաև ազգային) հեղինակների կողմից ընդունված լինեն որպես ամբողջ նահանգում բնակվող հայերի ընդհանուր թվաքանակը։

Օտար հեղինակների մեծամասնությունը, հասկանալի է, իբրև սկզբնաղբյուր է ընդունել թուրքական պետության կողմից հայտարարված խեղաթյուրված տվյալները։

Չի կարելի անտես անել նաև այն պարագան, որ Թուրքիայում հայերին (նաև հույներին) որպես խորթ տարր բանակ չէին տանում (մինչև 1908-ի հեղաշրջումը)։ Դրա փոխարեն արական սեռից, ծնված օրվանից, զինվորական տուրք էր գանձվում, ուստի, հաճախ հայերը խուսափում էին տղաների թիվը ճիշտ ցույց տալուց։

Ուշագրավ է Պ. Թումայանի 1870-ական թթ. Կ. Պոլսո պատրիարքին (Խրիմյան Հայրիկին) ներկայացրած տեղեկագրում Պոնտոսի հայ բնակչության թվաքանակի մասին հետևյալ հաղորդումը.

«Գյուղերու եկեղեցիք և բնակիչք... որքան որ այս գյուղերու եկեղեցվոց թիվը հայտնի է, այնքան անհայտ է անոնց ժողովրդյան թիվը և ասիկա, ինչպես փորձով գիտեմ, միայն այս վիճակիս համար չէ. սակայն այս գյուղերը՝ ինչպես նաև Ճանիկի վիճակն ալ պոնտական և Ճանիկի լերանց շղթաներու դժվարուտ վայրերը բազմօրյա ճանապարհներ ցան ու ցիր սփռված և օտարի մը անձամբ շրջել ու առանձին տնակները հաշվելը կարի դժվարին ու անհնարին ըլլալով՝ մանավանդ այլ և այլ նկատմամբ ժողովուրդն ալ ինք զինք ճամբորդներե և քննիչ հետաքրքիրներե ծածկելու մեծ խնամք ու փույթ ունենալով՝ գրեթե միշտ անորոշ և անստույգ մթության մը մեջ ծածկված մնալ հաջողած է. մանավանդ առաջնորդաց ցուցակներե շատերու անունը խուսափած է՝ պտղիներու օր ըստ օրե բարձրանալուն պատճառով, չասեմ փոխարեն բարոյապես օգուտ մ՝ալ չքաղելուն պատճառավ. շինական քահանայք և իշխանք ալ իրենց շահը հոգալով ժողովրդյան այս գործին օգնական՝ մանավանդ թե հեղինակ են, հիմա թող ազգը օրինավոր հաշիվ գտնու։ Ինչ կարելի է ըստ իս՝ քանի որ աշխարհագիր ընելե ժողովուրդը կսոսկա, և ծածկվելով կկարծե թե ապագային մեջ զորք և ուրիշ ծանր տուրքեր տալե պիտի ազատվի։ Ուստի հիմա մեր հայտնած թվերը միայն առաջնորդաց ծանոթները՝ որով և միշտ հարյուրին քառասուն նվազ պիտի ըլլան»[15]։

Վերջապես որտե՞ղ է ճշմարտությունը, ո՞ր թվերն են իրականության մոտ, քանի՞ հազար հայեր էին բնակվում Տրապիզոնի նահանգում եղեռնից առաջ։ Մանդակունու 1912-ին հայտարարած 100000-ը՞ թե՞ Թեոդիկի 1922-ին հայտարարած 65000-ը։ Վերջին թվերը, Լ. Խաչիկյանի խոսքերով ասած՝ «առ ի չդոյե ավելի ստույգ տվյալների» առայժմ ստացել են կիսապաշտոնական օրինականություն։

Այդ հարցի ամենահավանական ու ճշմարտության մոտ պատասխան կարող են տալ միայն նույն բնակավայրերից գաղթած ու փախած համշենահայերն ու պոնտահայերը։

Եղեռնից առաջ ու հետո, Տրապիզոնի նահանգի համարյա բոլոր քաղաքներից, շրջաններից, գյուղերից ու մերձակա գավառներից ցարական Ռուսաստան ու ՍՍՀՄ փախած ու գաղթած բազմաթիվ համշենահայերի ու պոնտահայերի գրավոր ու բանավոր վկայությունների համաձայն[16], Եղեռնի նախօրյակին հայրենի երկրում (Տրապիզոնի նահանգ) բնակվող հայերի բնակավայրերն ու բնակչության թվաքանակը հետևյալ պատկերն էին ներկայացնում։

---

15 «Լումա», Տփղիս, 1889, № 2, էջ 183։

16 Հոդվածի հեղինակը տարիներ շարունակ շրջել է համշենահայերի ներկայիս բնակավայրերը (Անապայից մինչև Բաթումի ձգվող մերձափնյա քաղաքներն ու գյուղերը) և հարց ու փորձի միջոցով հարյուրից ավելի ծեր ու հասակավոր վերապրողներից տեղեկություններ է քաղել համշենահայերի ու պոնտահայերի բնակավայրերի և բնակչության թվաքանակի վերաբերյալ։ Հոդվածագիրը փորձել է վերականգնել նախկին Տրապիզոնի վիլայեթի գրեթե ողջ տարածքի վրա մինչև 1914 թ. գոյություն ունեցող այն բնակավայրերի անունները, որոնցում հայեր են ապրել և նշել է յուրաքանչյուր գյուղի գերդաստանների ու բնակչության թվի մասին տվյալներ, որոնք հետաքրքրական են այս հարցով զբաղվողների համար։

Տրապիզոնի գավառ

Տրապիզոն քաղաք՝ 14000։

Սյուրմենե (Սև գետ) գավառակը ուներ 106 տուն, 996 շունչ բնակչություն, որ տեղաբաշխված էր հետևյալ 10 գյուղերում. Մաղթելա՝ 17 տուն, Քութոնոց (Կամինիշկա)՝ 7, Քինոսցոց գեղ՝ 20, Կատրա՝ 11, Սաթես՝ 2, Ալչաք դերե՝ 10, Ժուժք՝ 7, Էլեմոնոց՝ 23, Մաղթեշ՝ 6, Խամուրկյան Զարսուսի՝ 317։

Յոմուրայի վիճակ (Նահիե).— Յոմուրայի հետևյալ 29 գյուղերում բնակվում էին 589 տուն, 4143 շունչ համշենահայեր. Կատարուքսա՝ 2 տուն, Ֆիրինծուտ՝ 27, Բաճուլաղ՝ 2, Սիֆթեր՝ 26, Ցեփնցոց գեղ՝ 23, Ապիոն՝ 31, Սամերա՝ 32, Միսոխոր՝ 2, Տրոնա՝ 13, Կոխալի՝ 10, Քյան՝ 25, Կալաֆկա հայկական՝ 63, Շոնա (Շանա)՝ 7, Սարայլար՝ 24, Ծինկիլա՝ 43, Կյուշանա՝ 56, Աֆյանդ՝ 28, Զեֆանոզ՝ 60, Կավարա՝ 8, Կրոմիլա՝ 38, Մինասլի՝ 10, Սկաֆինա՝ 23, Տերտերցոց գեղ (Քեշիշցոց մահալա)՝ 8, Տուրնացոց օղ՝ 11, Ճոշարա՝ 35, Կերասիա՝ 6, Խոցթեմասիա՝ 1, Խոց՝ 5, Կուխլա՝ 718։

Ճեվիզլուղի վիճակ.— Այս վիճակի 4 գյուղերում եղեռնի նախօրյակին բնակվում էին ընդամենը 23 տուն, 161 շունչ հայեր, որոնցից Մանզելերում՝ 10 տուն, Էլմալուխում (Ալմալուխ)՝ 2, Օլասայում՝ 10 ու Ծիկանոյում՝ 1։ Ծիկանոյը և Օլասան անցյալում բազմամարդ հայկական գյուղեր էին։ Բռնի իսլամացման տարիներին այստեղ ևս խուժել են թուրք ենիչերիները, որոնց ահից հայ բնակչության մի զգալի մասը կրոնափոխվել է, մի մասը՝ փախել-հեռացել[19]։

Տրապիզոնի քաղաքամերձ (հարավ-արևմտյան) գյուղեր.— Քաղաքամերձ 16 գյուղերն ունեին 260 տուն, 1820 շունչ բնակչություն։ Այդ թվում Մելեթրիա՝ 6, Վանքապատկան հողեր՝ 10, Պարյան՝ 22, Զոքուր Զաիր՝ 5, Տիվրանոզ՝ 4, Թոծ՝ 21, Մանդա՝ 3, Անիֆա՝ 20, Տելիբալթա՝ 18, Կրոպի՝ 21, Սիսեռա՝ 5, Մահմատ՝ 10, Արղալիա՝ 22, Զիզակսա՝ 42, Նոխածանա՝ 26, Վերանա՝ 25։ Վերջին երեք գյուղերը, վարչական գծով, կապվել էին Յոմուրայի վիճակին[20]։

Ագչեապատի (Պլադանա) գավառակ.— Ագչեապատի գավառակի կենտրոն Պլադանա ծովափնյա փոքր ու գողտրիկ քաղաքը գտնվում է Տրապիզոնից արևմուտք։ Գավառակի 35 գյուղերում, մեծ մասամբ անխառն հայաբնակ, ապրում էին 747 տուն, 5220 շունչ հայեր։ Պլադանա քաղաքում՝ 12 տուն, 72 շունչ, ընդամենը՝ 5301 շունչ։ Այդ գյուղերն էին.

Ա) Սերա գետի հովտում. Մանկանա՝ 6 տուն, Ծիվրիկա՝ 23, Կապարոն՝ 16, Իլոնա, Կատավոլ (Ղաբայոն)՝ 10, Լաղանա՝ 35, Միմերա՝ 43, Բուռնազ՝ 3, Մեղրիկցոց գեղ՝ 7, Թարաքճիլի՝ 7, Կյունեյ՝ 12, Քիրլիցոց օղ (Քիրլի)՝ 11, Աղրոյ՝ 21, Մեծ Մալա՝ 61, Փոքր Մալա՝ 28, Սալախոր՝ 17, Լիկոս՝ 20, Վերին Զավուրտի՝ 17, Ներքին Զավուրտի՝ 18, Լուսինոյ՝ 18, Կապոն (Կապան)՝ 22, Իլե՝ 19, Աղրիտ՝ 10։

Բ) Սաթարիա գետի հովտում (Պլադանայի քաղաքամերձ գյուղեր). Կրոգեղ՝ 13 տուն, Աշորա՝ 17, Ապերա՝ 17, Նոյսեսցոց գեղ՝ 15, Գալայճցոց գեղ՝ 23, Թաթոսցոց գեղ՝ 13, Թորոսլի (Թորոսցոց գեղ)՝ 15, Մինասցոց գեղ՝ 20, Էմեքսուզցոց գեղ՝ 12, Օքսուզցոց գեղ՝ 10, Կարնեցցոց գեղ (Մահալա)՝ 8, Ղալինոս կամ Զոլաքցոց գեղ՝ 26, Կոնտակլոց գեղ՝ 16։

---

17 Սյուրմենե գավառակի վիճակագրական տվյալները կազմել են եղեռնի նախընթաց տարիների հայկական համայնքի թաղապետ (մուխթար) Մ. Մինասյանը, Վ. Գրիգորյանը, Դ. Քյոսյանը, Մ. Յազըճյանը, Վարդան ու Սաթենիկ Քյահյաններն ու ուրիշներ։

18 Յոմուրայի վիճակի հայ բնակչության վիճակագրությունը կազմելուն (տների քանակը, ընտանիքների անվանական ցուցակը ու թիվը) գործոն մասնակցություն են ցուցաբերել Նահապետ Քյոսյանը, Գրիգոր ու Հայկ Թոռլաքյանները, Վարդան ու Հովհաննես Ղուկասյանները, Գասպար Վարդանյանը, Զվարթ Նուպարյանը, Գասպար Գալուստյանը, Ազգանուշ Հովակիմյանը, Ադամ Հովսեփյանը, Արություն Վաշտանյանը, Գասպար Քյոսյանը, Գաբրիել ու Սահակ Սորսոմությանները, Սերոբ Կակոսյանը և ուրիշներ։

19 Ճեվիզլուղի հայ բնակչության մասին պատմել են Պայծառ Մալխասյանը, Աղասեր Օհանյանը, Արմենակ Բաղդասարյանը և այլք։

20 Քաղաքամերձ գյուղերի վերաբերյալ տեղագրական ու վիճակագրական տեղեկությունները հավաքելուն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել այդ շրջանի զանազան գյուղերի բնակիչներ՝ Բաղդասար Ռահանյանը, Սերոբ Ռահանյանը, Արսեն Նուպարյանը, Արտաշ Ջիդարյանը, Սարգիս Պողոսյանը, Պետրոս Թոփալյանը, Բյուզանդ Թոփալյանը, Տրդատ Բարմաքյանը, Հովհաննես Հրեշտակյանը, Վարդգես Մավյանը, Հակոբ Զոլաքյանը, Բաղդասար Էքշիյանը, Վարդան Հրեշտակյանը և ուրիշներ։

Ինչպես Յոմուրայի ու Տրապիզոնի քաղաքամերձ գյուղերի, նույնպես նաև Ազչեապատի գավառակի ամբողջ հայ բնակչությունը Համշենից ու Սև գետից նողոպրած համշենահայեր էին։ Եթե նույնիսկ ուրիշ վայրերից փոքրաթիվ հայեր գաղթել էին այդ շրջանները, նրանք էլ ամբողջովին ձուլվել էին համշենահայերի մեջ[21]։

Վազֆը-Քեպիր գավառակ.— Վազֆը-Քեպիր ժողովուրդը անվանում էր Բեյուք Լիման։ Գավառակի կենտրոն ծովափնյա Բեյուք Լիման (Ֆոշ) ավանը գտնվում է Պլադանայից արևմուտք։ Ականատեսների վկայությամբ, այս ավանում 1909—1910 թթ. բնակվում էին Թամզարայի ու Շապին-Գարահիսարի կողմերից գաղթած շուրջ 25 տուն հայեր։ Ունեին փոքր դպրոց, մեկ ուսուցիչ։

Այս լայնածավալ, ծովամերձ գավառակում ուրիշ հայաբնակ գյուղերի գոյության մասին տվյալներ չկան։

Էլեվիի վիճակ.— Կենտրոն Էլեվի ավանում բնակվում էին շուրջ 60 տուն հայեր։ Դերասան Արման Կոթիկյանի վկայությամբ ավանի հայերը գաղթել էին Շապին-Գարահիսարից ու Թամզարայից։

Տրիպոլի քաղաք.— Էլեվիից արևմուտք։ Բժշկյանի վկայությամբ, իր այցելած ժամանակ (1817 թ.) քաղաքում բնակվում էին հույներ, հայեր ու տաճիկներ[22]։ «Ազատամարտ» թերթի տվյալներով, 1914-ին քաղաքի հայկական դպրոցում ու մանկապարտեզում սովորում էին 200 երեխաներ[23]։ Հիմք ունենալով աշակերտների թիվը, կարելի է ենթադրել, որ նույն թվականին Տրիպոլիում ապրող հայերի նվազագույն թիվը 1500-ից պակաս չի եղել։

Կիրասոն (Փառնակիա) քաղաք.— Տրիպոլիից արևմուտք, ծովափնյա գեղատեսիլ քաղաք։ Երբեմնի Պոնտոսի թագավոր Միհրդատի որդի Փառնակի աթոռանիստ քաղաքը։ Մ. Բժշկյանի վկայությամբ 1817-ին քաղաքի հայ բնակչությունը 40 տուն կլիներ։ Ունեին եկեղեցի, որ դնել էին հույներից 100 տարի առաջ։ Այս հանգամանքը հաստատում է, որ 1700-ական թթ. քաղաքում զգալի թվով հայեր են բնակվել[24]։

1911 թ. Տրապիզոնի ազգային մարմինների կազմած մարդահամարի տվյալներով, նույն թվականին Կիրասոն քաղաքում ու շրջակա գյուղերում բնակվում էր 3000 շունչ հայ, որոնցից 200-ը (38 տուն)՝ գյուղերում։ «Ազատամարտի» հիշյալ համարի տվյալներով, 1914-ին Կիրասոնի հայկական երկսեռ դպրոցն ուներ 330 աշակերտ, 16 ուսուցիչ։ Հիշված թերթում ոչինչ չի ասվել մանկապարտեզի երեխաների թվաքանակի մասին։ Մանկապարտեզ հաճախող փոքրիկների թիվը պայմանական հաշվելով 100, աշակերտների ու մանկապարտեզի սանիկների ընդհանուր թիվը կլինի 430 շունչ։ Այդ թվերը վկայում են, որ եղեռնի նախօրյակին Կիրասոնն ունեցել է շուրջ 3500 հայ բնակչություն[25]։

1900-ական թթ. Կիրասոնից Տրապիզոն փոխադրված ու բուն Կիրասոնից Ռուսաստան գաղթած հայերի վկայությամբ, կիրասոնցի, ինչպես նաև էլեվիցի հայերի մեծամասնության բնօրրանները եղել են Կիրասոնի սահմանակից Թամզարա ու Շապին-Գարահիսար քաղաքներն ու շրջանները[26]։ Թերևս կային նաև հեռավոր Կեսարիայից փոխադրվածներ։

---

21 Ազչեապատի գավառակի վերաբերյալ տվյալներ հավաքելուն մեծ աջակցություն են ցույց տվել Մինաս Սարյանը, Մելքոն Կարնեցյանը, Մաթևոս Մրվանյանը։ Երվանդ Սարյանը, Հովսեփ Ուզլյանը, Հակոբ Գալայճյանը, Խաչիկ Թոփալյանը, Ավետիս Կանսուզյանը, Թոմաս Մաղկալյանն ու ուրիշներ։ Հատկապես շնորհակալ գործ է կատարել Սուխումի հայկական դպրոցի ուսուցիչ Հարություն Գալայճյանը, որի ծնողները Սաթարիա գյուղախմբի Գալայճցոց գյուղից են փախել Սուխումի։ Հարությունը ծնողների ու հայրենակիցների հուշերը գրի առնելով, կարևոր տեղեկություններ է հաղորդում Ազչեապատի, հատկապես Սաթարիայի շրջանում բնակվող համշենահայերի վերաբերյալ։

22 Մ. Բ ժ շ կ յ ա ն, Պատմություն Պոնտոսի, Վենետիկ, 1819, էջ 55։

23 «Ազատամարտ», 1914, № 1492, «Ուսուցչական համագումար Տրապիզոնի մեջ»։

24 Մ. Բ ժ շ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 54։

25 Ըստ երևույթին, տպագրական սխալի հետևանք է Լ. Խաչիկյանի հիշյալ հոդվածում («Բանբեր Երևանի համալսարանի», էջ 141) Կիրասոնի վերաբերյալ Հ. Աճառյանի գրքից քաղված հետևյալ մեջբերումը. «Կիրասոն Տրիպոլիից արևմուտք, գեղեցիկ նավահանգիստ, հիմնվել է 1810 թվին՝ Ավետիք հայ իշխանի ձեռքով, ուներ 400 հայ բնակիչ»։ Գրվածը վերաբերում է Օրդու քաղաքին։ Հ. Աճառյանը գրել է. «Օրդու Կիրասոնից արևմուտք՝ գեղեցիկ նավահանգիստ, հիմնվել է 1810 թվին Ավետիք հայ իշխանի ձեռքով...» (տե՛ս նշվ. աշխ., էջ 9)։

26 Այդ մասին բավարար տեղեկություններ տալիս է «Պատմություն հայկական Պոնտոսի» գիրքը, էջ 467։

Բուլանճըրի վիճակ.— *Բուլանճըք, Կիրասոնից արևմուտք, համանուն վիճակի կենտրոնը։ Շրջանում բնակվում էին շուրջ 75 տուն, 525 շունչ հայեր։ Ունեին տարրական դպրոց և հինավուրց եկեղեցի, Ս. Նիկողայոս անունով։*

Օրդուի գավառակ.— *Օրդու քաղաքի հիմնադրման մասին Մ. Բժշկյանը հաղորդում է. «Առաջ հոս բնակություն չկար։ Մեր օրը ձեռամբ Մահտեսի Ավետիք Տրապիզոնցի իշխանին բնակություն շինվեցավ ամենայն ազգոց»[27]։ Մ. Բժշկյանը Սև ծովի շուրջը շրջագայել է 1817—1819 թթ., ուստի Օրդուի հիմնադրումը վերաբերում է 1810—1820 թթ.։ Հ. Աճառյանը գրում է. «Օրդու Կիրասոնից արևմուտք՝ գեղեցիկ նավահանգիստ, հիմնվել է 1810 թվին՝ Ավետիք հայ իշխանի ձեռքով, ուներ 400 հայ բնակիչ»։ 1908 թ. պաշտոնական տվյալներով[28] (Սալնամե—տարեցույց, մարդահամար) գավառում բնակվող 130800 շնչից 103400-ը թրքացած տարբեր ազգեր էին (վրացի, չերքեզ, լազեր), 17000-ը՝ հույներ և 10286-ը՝ հայեր, այդ թվում՝ 1186 հայ բողոքականներ։ 1911 թ. ազգային մարմինների կողմից կազմված մարդահամարի համաձայն, Օրդու քաղաքում նույն թվականին ապրում էին 7800 հույներ և 3000 հայեր։ Դժբախտաբար ոչինչ ի ասվում հայ բողոքականների մասին, ուստի և պարզ չէ, թե քաղաքում բնակվող 1000-ից ավելի բողոքական հայերը մտե՞լ են այդ քանակի մեջ, թե ոչ։ «Հայերը Օրդուի մեջ կհաշվվեին մոտ 5000, դարուս առաջին տասնամյակի ընթացքին»,— գրում է Ս. Ծոցիկյանը[29]։*

«Ազատամարտ» թերթի 1914 թ. 1492-րդ համարի տվյալներով, 1914 թ. Օրդուի երկսեռ դպրոցն ուներ 9 դասընթաց, որոնցից 3-ը՝ մանկապարտեզի բաժնում։ Աշակերտների թիվը հասել է, առանց մանկապարտեզի, 500 հոգու։ Մանկապարտեզի երեխաների նվազագույն թիվը 100 հաշվելով, ամբողջ աշակերտության թիվը կհասներ 600-ի։

Քաղաքի հայ բողոքականներն ունեին բարեկարգ դպրոց՝ 60 աշակերտներով։ Հետևապես, 1914-ին Օրդուի բոլոր հայկական (լուսավորչական, բողոքական) դպրոցների ու մանկապարտեզների աշակերտության թիվը եղել է 660-ից ոչ պակաս։ Եթե նույնիսկ ընդունենք, որ աշակերտության թիվը հավասար էր քաղաքի ամբողջ բնակչության 15 տոկոսին, որը այն ժամանակվա պայմաններում բացառիկ իրողություն էր, նույն թվականին (1914) Օրդուի ամբողջ հայ բնակչության (լուսավորչական, բողոքական, կաթոլիկ) թվաքանակը շուրջ 4500 շունչ էր։

Օրդուի գավառակը բաժանված էր առանձին վիճակների, որոնք հետևյալներն էին.

Թեփեի բաղլու կամ Սարիճուղի վիճակ.— *Պազարսու՝ 25 տուն, Բազմոնթ՝ 15, Սարիճուղ 18, Թոքմաքդյուզի՝ 6, Թոփալ գեղ՝ 15։ Ընդամենը վիճակում՝ 5 գյուղ, 79 տուն, 553 շունչ։*

Քիրեզ Դերեի վիճակ.— *Ջոքտում՝ 65 տուն, Յոքուշ Տիպի՝ 17, Կապաք Թեփե՝ 45, Ջոմ Բաշի՝ 35, Խոյանի՝ 60, Քիրեզ Դերե՝ 110, Մուսա-Կրան (Մուսե Քըըթ)՝ 27, Քյոքներ Բել՝ 22, Քելե Թեփե (Թեփե)՝ 20, Ջաղմոն՝ 25։ Ընդամենը վիճակում՝ 10 գյուղ, 426 տուն, 2982 շունչ։*

Ջավուշլարի վիճակ.— *Գուշ ջերեն՝ 28 տուն, Ջավուշլար՝ 48, Գայա Քյոյ՝ 16, Ալաչա Աղաչ (Ալաչա Աղոմ)՝ 26, Յոնուզ Քյոյի՝ 15, Կըզըլ հիսար՝ 25, Դերելի (Թեյնելի)՝ 20, Գարալուղ՝ 45, Իչմե քյոյ՝ 13։ Ընդամենը՝ 9 գյուղ, 238 տուն, 1666 շունչ։*

Մերֆեզի վիճակ.— *Աք Յաղի՝ 80 տուն, Ջորլընգ՝ 55, Ջըմըշի՝ 16, Սայաչի՝ 105, Գատընճուղ՝ 64, Ջիբուքլուգ՝ 26, Ահմետ վազը՝ 22, Էրինճուղ՝ 45, Էլուբեկ-կրան՝ 26, Կուզ Քյոյի՝ 10, Բուլթոն՝ 24, Կյունտուզլի՝ 12, Ջոնկալ Բել՝ 10, Խոջ օղլի՝ 50, Գյոզ Էօրեն՝ 46, Խոշ Կելուր՝ 20, Սալլաթ՝ 20, Կարագյոզ՝ 12, Կոշաչի՝ 34, Յազլուղ՝ 18։ Ընդամենը վիճակում՝ 20 գյուղ, 695 տուն, 4865 շունչ։*

Բաշ Ջարտաղի վիճակ.— *Կըրմա՝ 15 տուն, Էքուզ Էօրեն՝ 23, Կըզլիմոն՝ 18, Կայա Տիպի՝ 35, Ջաթաղ՝ 30, Ջամուրլի՝ 28, Բաշ Ջարտաղ՝ 46, Լաղ Բելի՝ 10, Գաշ Աղըզ՝ 12, Տոնձ գյոլ (Տյուզ գյոլ)՝ 28։ Ընդամենը՝ 10 գյուղ, 245 տուն, 1715 շունչ։*

Ջոմաշի վիճակ.— *Տեղերմեն Դերե՝ 12 տուն, Շխլար՝ 18, Կաթըր Քյոյի՝ 15, Փամբուքլուղ՝ 38, Քյոմուրճի՝ 20, Ֆոտոնա՝ 12, Տոլեյթոմ՝ 12, Ջոմաշ՝ 82։ Ընդամենը՝ 8 գյուղ, 209 տուն, 1463 շունչ։*

Ըերշեմպեյի վիճակ.— *Բերշեմպե քաղաք՝ 22 տուն, 132 շունչ։*

---

27 *Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 53։*

28 *Օրդու քաղաքի վերաբերյալ բերված ինչպես սույն վիճակագրական տվյալները, նույնպես նաև մի շարք մեջբերումներ, քաղվել են Ջիլճյանի հոդվածից։ Տե՛ս Արշակունի, նշվ. աշխ., էջ 488։*

29 *Ս. Ծոցիկյան, նշվ. աշխ., էջ 811։*

Բերշեմպեյի շրջանի հայաբնակ գյուղերը. Յավուզլար՝ 15 տուն, Պող Թեփե՝ 45, Կարա-օլուք՝ 59, Աղպելեն՝ 12, Էսեքյուզ (Էսեսե քյուզ)՝ 14, Արուք (Արուխ)՝ 50, Կաղչի ուրեն՝ 48, Դարբքջա (Դարբք-Սաչի)՝ 40, Քյուրդ դաղի՝ 13, Յոնաղ՝ 26։ Ընդամենը՝ 8 գյուղ, 322 տուն, 2254 շունչ։

Ամբողջ գավառակում՝ 70 գյուղ, 2214 տուն, 15498 շունչ։ Ընդամենը Օրդու քաղաքում ու գյուղերում՝ 19998 շունչ[30]։

Սամսոնի գավառ (Ճանիկ)

Սամսոն քաղաք՝ 5000 շունչ։

Ֆաթսա գավառակ.— Ֆաթսա քաղաք՝ 1800 շունչ։ Ֆաթսայի հայաբնակ գյուղերը. Ջիբուքյուզ՝ 110 տուն, Ջինար՝ 60, Գայա տիպի՝ 45, Խալաշլի՝ 35, Բաջանաղ՝ 15, Կյունեյ՝ 15, Բորու Քյոյի՝ 40, Յաղ՝ 40, Յաղ Թեփե՝ 30, Ախլաթ՝ 15, Տաշ Օլուզ՝ 50, Քեսթանե Յոքուլի՝ 25, Թեվելուզ՝ 20։ Ընդամենը՝ 12 գյուղ, 460 տուն, 3220 շունչ։ Ամբողջ գավառակում՝ 5020 շունչ[31]։

Ունիեի գավառակ.— Ունիե քաղաք՝ 250 տուն, 1500 շունչ։

Ջաթալ Բուղարի վիճակ (Նահիե).— Այս վիճակը գտնվում է Ունիեի հարավ-արևելյան կողմը, ճեվիզ Դերե գետի հովտում։ Միդյուրը (կառավարիչ) նստում էր քաղաքից ոչ հեռու Ջաթալ Բուղար գյուղում։ Վիճակի հայաբնակ գյուղերը. Ուչ Քյուփրի՝ 16 տուն, Էքուզ Քյոյի՝ 55, Ջալ Բողազ՝ 15, Լախանա՝ 12, Քելազ՝ (Քելեզ) իր թաղերով (Գորգմաղլի կամ Սբրթիցոց գեղ, Մենկեն կամ Արմենակցոց գեղ ու Կյունեյ)՝ 153, Բալլուզ՝ իր տասը թաղերով[32]՝ 185, Ֆեններիտ՝ 20, Փաշա Քյոփրու՝ 28։ Ընդամենը վիճակում՝ 8 գյուղ, 484 տուն, 3388 շունչ։

Թեֆիրեզի վիճակ.— Թեքքիրեզ՝ 29 տուն, Յաղ Բասան՝ 10, Կողբիկ՝ 64, Թութլուզ կամ Մինասցոց գեղ՝ 20, Ալի Վարազ՝ 55, Յար բաշի՝ 50, Գարա Արմուտ՝ 18, Կապա դաղ՝ 40, Լբխնի (Մինասցիք)՝ 15։ Ընդամենը վիճակում՝ 8 գյուղ, 251 տուն, 1757 շունչ։

Քյոքլուզի վիճակ.— Քյոքլուզի վիճակի հետևյալ գյուղերում՝ (Քյոքլուզի նախկին թաղերը) Թեք Թամի, Սեյլան, Մանաստիր, Խաշդուռ, Կյոզ դերե, Տյուզ Թաբլա, Յուսուֆլար, Էյրի Բել և Յամարճուկ՝ 300 տուն, Էքինճուզ՝ 45 տուն։ Ընդամենը վիճակում՝ 10 գյուղ, 345 տուն, 2415 շունչ։

Յազըֆ Բելենի վիճակ.— Փելիթ Յաթաղ՝ 55 տուն, Մելիք Թեփե՝ 25, Քիրփիչլուզ՝ 60։ Ընդամենը վիճակում՝ 3 գյուղ, 140 տուն, 980 շունչ։

Գարամոնի (Գարաման) վիճակ.— Ջաքալ՝ 38 տուն, Գարամոն՝ 25, Կապաք Կելիշ (Վեզիրցոց գեղ)՝ 45։ Ընդամենը՝ 3 գյուղ, 108 տուն, 756 շունչ։ Ամբողջ շրջանում՝ 32 գյուղ, 1328 տուն, 9296 շունչ։ Ընդամենը ամբողջ գավառակում (Ունիե քաղաքում ու գյուղերում)՝ 1578 տուն, 10796 շունչ[33]։

Թերմեի գավառակ.— Թերմե քաղաք՝ 110 տուն, 660 շունչ։ Թերմեի գավառակի հայաբնակ գյուղերն էին. Գոճաման բաշի՝ 65 տուն, Ջենիկ գյոլ՝ 22, Քիրեզլուզ՝ 18, Գրբաշցոց գեղ՝ 15, Մեշելուզ՝ 16[34], Ջելիֆտար՝ 17, Մատիլցոց գեղ՝ 12, Հոյլոն (Հոյլան)՝ 75, Կապալաղ՝ 25, Գաբաչալի՝ 68, Ջուրել՝ 24, Մախաթ՝ 28, Կյունեյճուկ՝ 36, Թերս-Յութաղ՝ 23, Ուչ-Բուղար՝ 40[35], Գարա-Գայա՝ 70, Սուլիջա (Սուլիե)՝ 80, Ամպար Թեփե՝ 20, Քել Թեփե՝ 20, Թոփուլ՝ 16, Արզու

---

30 Օրդու գավառակի համշենահայերի վերաբերյալ տեղագրական ու վիճակագրական տեղեկություններ հավաքելուն գործոն մասնակցություն են ունեցել նույն գավառակի նախկին բնակիչներ Մ. Բաղդասարյանը, Հ. Դովաճյանը, Մ. Ջաքրյանը, Ս. Ջեննեթյանը, Մ. Մաթոսյանը, Ծ. Մաթոսյանը, Լ. Ուստյանը, Հ. Քյոսյանը, Ա. Արզումանյանը, Ա. Գոչյանը, Ա. Թոփչյանը, Ղ. Ղոլաքյանը, Հ. Ջանսուզյանը և ուրիշներ։

31 Ֆաթսա գավառակի վերաբերյալ տվյալները պատմել են Գ. Գարաքյահյանը՝ Տաշ Օլուզ գյուղից, Կ. Փահլևանյանը և Մ. Համալյանը՝ Ջիբուքլուզ գյուղից։

32 Բալլուզի թաղերն էին՝ Հեքիմցոց, Ուստցոց, Գալայճցոց, Կարագյոզցոց, Լոբկեցոց, Մալխասցոց, Թորոսցոց, Մղդեսցոց, Կոնդաքչոց։

33 Ունիեի գավառակի մասին տվյալներ հավաքելուն մեծ աջակցություն է ցույց տվել Ջատիկ Խաչիկի Թումանյանը։ Առանձին գյուղերի մասին պատմել են Լ. Թահմազյանը (Գրպաշյանը), Ա. Տրապիզոնյանը, Գ. Փափազյանը, Ջ. Գրիգորյանը, Դ. Խայթյանը, Ա. Գարաքյահյանը, Մ. Թուլլյանը, Կ. Այդինյանը և ուրիշներ։

34 Լուսաբեր Թահմազյանի (Գրպաշյան) վկայությամբ, Քիրեզլուզ, Գրբաշցոց գեղ, Ջենիկ գյոլ և Մեշելուզ գյուղերը ենթարկվում էին Ունիեի գավառակին։

35 Կարապետ Այդինյանի և Ջաքար Գրիգորյանի վկայությամբ Ուչ-Բուղարը վարչապես ենթարկվում էր Ունիեին։

Դաղի՝ 30, Օրման Քյոյի՝ 23, Ալեմ Դաղի (Էլում Դաղի)՝ 100։ Գավառակի 23 գյուղերն ունեին 849 տուն, 5943 շունչ հայ բնակչություն։ Ընդամենը գավառակում (Թերմե քաղաքում ու գյուղերում)՝ 6603 շունչ[36]։

Զարշամպայի գավառակ.— Զարշամպա քաղաք՝ 300 տուն, 1800 շունչ։

Կուրշումլիի վիճակ.— Էյրի Դերե իր թաղերով (Էյրի Քիրիշ, Գուշ Գայա, Գարա Գայա, Վարելճցոց գեղ, Սելվիցոց գեղ, Քյուլլիցոց գեղ)՝ 300 տուն՝ Սրթմա Սու՝ 68, Կատը Կիրիշ՝ 20, Կաթրոնլի՝ 38, Աղջակյունեյ՝ 30, Կյողջեքյոյ՝ 80, Զաքմաղ (Թաթուլցոց թաղով)՝ 60, Ուլու Բուղար (Ուլունփար)՝ 55, Էշեքճի Կրան՝ 24, Կապաճեվիզ՝ 67, Խարմանլար՝ 29, Կուրշումլի (Խուրշունլի)՝ 26, Յայլաճուղ՝ 46, Դիբեքլեր՝ 13, Օխտ Կալ՝ 27, Աղլուջ (Աղլաջ)՝ 40, Բեղիրկցոց գեղ՝ 8, Սյունկյուրդցոց գեղ՝ 16, Կալթաղ կամ Փափաղցոց գեղ՝ 22. Բուղար լիճի կամ Գոչկոնցոց գեղ՝ 20, Մելեթցոց գեղ՝ 18, Էքսուղցոց գեղ՝ 13, Էլուք Դերե՝ 20, Կապալաղ՝ 29, Կոնաքլուղ (Կոնաքլրք)՝ 45, Կարթլուղ իր թաղերով (Մժեղուտ, Ջողալուղ, Ալա Խարման)՝ 46, Կավ շաղ՝ 18։ Ընդամենը վիճակում՝ 27 գյուղ, 1178 տուն, 8246 շունչ։

Այվանուղի վիճակ.— Գափու Գայա՝ 28 տուն, Ջիֆթ Իշի՝ 44, Շահնա Գյոլ՝ 24, Գարբգլուղ (Քըյրբլի)՝ 50, Քեսթանե Կելիշ՝ 60, Թեքուր (Թեքվարի) իր Էղրի Քիրիշ, Խտրղ Ալի, Ֆոնկին գեղ թաղերով՝ 102, Մարթիլ (Մարթել)՝ 65, Այվաճուղ՝ 21, Տաշջուղաղ՝ 12, Կուրբաթ՝ 53, Էորեղ բել (Օտիիբել)՝ 29, Ալա Խարման՝ 15, Քարոտ գեղ՝ 20, Սոյուղ կամ Պետիկցոց գեղ՝ 61։ Ընդամենը վիճակում՝ 14 գյուղ, 584 տուն, 4088 շունչ։

Զարաղի վիճակում.— Օրդու բաշի (Խաչին Օղը թաղով)՝ 50 տուն, Քեշապցոց գեղ՝ 25, Էմիրխոն՝ 36, Ծովկար Բաշի՝ 80, Դերե-Զաթ (Զաթաղի)՝ 30, Զաթաղ՝ 60, Քյոյ Յերի՝ 24, Տաշլի Յաթաղ (Տալջըղըլ)՝ 30, Բեղուղլար՝ 40, Օրթա Օյմաք՝ 80, Քեսթանե Քիրիշ՝ 55, Էրինջուղ՝ 70, Արփա Զուղուրի՝ 25, Ֆուտուքճի՝ 50, Կողլախ՝ 30, Ֆուրուն իշի՝ 45, Բոյա Բել՝ 21, Թեքքե Քյոյի՝ 35, Գարա Աղաջ՝ 25։ Ընդամենը վիճակում՝ 21 գյուղ, 916 տուն, 6412 շունչ։

Ամբողջ Զարշամպայի գավառակում՝ 62 գյուղ, 2678 տուն, 18746 շունչ։ Ընդամենը Զարշամպա քաղաքում ու գյուղերում՝ 2978 տուն, 20546 շունչ[37]։

Բաֆրայի գավառակ.— Տրապիզոնի նահանգի (նախկին) ամենաարևմտյան, ծովափնյա Բաֆրա քաղաքի Բաֆրայի հայկական դպրոցն 1914 թ. ուներ 260—270 երկսեռ աշակերտություն, բացի մանկապարտեզից։ Նույն թվականին քաղաքում բնակվում էին շուրջ 2200 հայեր։ Որքան հայտնի է, գավառակում կար երկու հայաբնակ գյուղ՝ Ալաչամ՝ 30 տուն, 210 շունչ և Գուզչուլար՝ 15 տուն, 105 շունչ։ Ընդամենը՝ 2 գյուղ, 45 տուն, 315 շունչ։ Ամբողջ գավառակում (Բաֆրա քաղաքում ու գյուղերում)՝ 2515 շունչ[38]։

Կավախի գավառակ.— «Էջմիածին» ամսագրում[39] նշվեր է, որ Կավախ նահանգում (վիճակ) եղել է ս. Աստվածածին եկեղեցի, որ հիմնվել է 1889 թ.։ Սա վկայում է, որ այդ ժամանակ այնտեղ զգալի թվով հայեր են բնակվել։ Բացի այդ, վերապրողներից (Երվանդ Թորոսյան, Շահեն Մինասյան) քաղած կցկտուր տեղեկությունների համաձայն, ինչպես Կավախ քաղաքում, նույնպես նաև շրջանում բավական թվով հայեր էին բնակվում։ Ենթադրվում է, որ շրջանում մոտավորապես 500 շունչ հայ բնակչություն է եղել։

Ճանիկի (Սամսոն) գավառի արևելյան սահմանից սկսած՝ Ֆաթսա, Ունիե, Թերմե ու Զարշամպա գավառակների գյուղերի ամբողջ հայ բնակչությունը, առանց բացառության, Համշենից

---

36 Թերմե գավառակի վերաբերյալ տեղեկություններ հավաքելուն ակտիվ մասնակցել են՝ Տրդատ Գարակյոզյանը, Լուսիկ Շալճյանը, Եղիա և Սաթենիկ Ներսեսյանները, Սեդրակ Ներսեսյանը, Աբել Թահմազյանը և ուրիշներ։

37 Զարշամպայի գավառակի մասին մեծարժեք տեղեկություններ են տվել Սառա Մելքոնյանը (Թորոսյան), Սուլթան Նահապետյանը (Քյուլյան), Երվանդ Կարապետյանը, Մարիամ Կարապետյանը, Գևորգ Աշալյանը, Շահեն Մինասյանը, Սառա Փաշայանը (Թոփչյան), Միհրան Սյունկյուրդչյանը, Գևորգ Քյուլյանը, Կարապետ Մոմճյանը, Սահակ Կարանյանը։ Առանձնապես մեծ ու շնորհակալ աշխատանք է կատարել Երվանդ Թորոսյանը (Տելի Երվանդ), որը Երևանից հատուկ ուղևորություն կատարեց Աբխազական ԱՍՍՀ ու Սոչի և հավաքեց թանկարժեք տեղագրական, վիճակագրական ու այլ տեղեկություններ։

38 Բաֆրա գավառակի վերաբերյալ վիճակագրական տվյալները կազմելիս, բացի կենդանի վկայություններից, օգտվել ենք նաև Արշակունու «Պատմություն հայկական Պոնտոսի» գրքի համապատասխան հատվածից, էջ 702։

39 Տե՛ս «Էջմիածին», 1966, Զ, էջ 41—45։

ու Սև գետից ճողոպրած համշենահայերն էին։ Ուրիշ վայրերից փոխադրված հատ ու կենտ ընտանիքներն ու անհատները ամբողջովին ձուլվել էին համշենահայերի մեջ, կորցնելով իրենց բնօրրանների ինքնուրույն ազգագրական դեմքը։

Զարշամպայի մոտակա Կուրշումլի (Խուռշունլի) գյուղախումբը սկզբում եղել է վտարանդի համշենահայերի վերջին ու բազմամարդ հանգրվաններից մեկը։ Ապագայում այնտեղից տարածվել են սահմանակից գավառներ՝ Սինոպ, Հեյրեղ (Հրեշ) և այլուր։ Մ. Բժշկյանը Խուռշունլիի մասին հաղորդում է. «Խուռշունլի ավան մոտ է Զարշամպայի. բնակիչներն են հայ Համշենու եկած և ամենքը զինվոր գրված են որգվոց որդի և ունին զորապետ հայ իշխան, որ զիրենք կկառավարե, մարդն ահ չունին. միայն Տերեպեկին հետ պատերազմ կերթան և զորավոր մարդիկ են»[40]...

Գյումուշիանեի գավառ

Գյումուշխանե քաղաք՝ 160 տուն, 960 շունչ[41]։
Գյումուշխանեի շրջանի 5 գյուղերում՝ 90 տուն, 630 շունչ։
Գայլ գետ (Քելքիթ) քաղաք՝ 120 տուն, 720 շունչ[42]։
Շեյրան քաղաք՝ 50 տուն, 300 շունչ։
Գարա Աղաջ գյուղ՝ 20 տուն, 140 շունչ։
Ընդամենը գավառի քաղաքներում՝ 330 տուն, 1980 շունչ, գյուղերում՝ 110 տուն, 770 շունչ։ Ամբողջ գավառում՝ 440 տուն, 2750 շունչ։

Գյումուշխանե քաղաքից ու գյուղերից վերապրողների ու եղեռնի նախընթաց տարիներին Ռուսաստան փոխադրվածների հետ բախտ չունեցա հանդիպելու, ուստի հնարավոր չեղավ գյուղերի անունները վերականգնել ու բնակչության թիվը ստուգել։

Լազիստանի գավառ (ներկայիս Ռիզեի նահանգ)

Ամբողջ Լազիստանի Ռիզե, Աթինա, Համշեն և այլ քաղաքներում ու գյուղերում ցիր ու ցան՝ 50 տուն, 300 շունչ։

Ամփոփելով Տրապիզոնի նահանգում եղեռնից առաջ բնակվող հայերի մասին բերված վիճակագրական տեղեկությունները, կստանանք № 4 աղյուսակում ներկայացված պատկերը.

Համշենահայերը Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի այլ վայրերում

Սինոպի գավառ

Զարշամպա գավառակում հանգրվան գտած համշենահայերի մի մասը, երկար ժամանակ չանցած, տեղափոխվում ու բնակություն է հաստատում Սինոպի գավառում։ Բացի համշենահայերից, նույն գավառի առանձին գյուղերում բնակվում էին նստակյաց հայ բոշաներ։

Սինոպ քաղաք.— Եղեռնից փրկված Մարիամ Ոսկերիչյանի, Գևորգ Գալաճյանի և այլոց վկայությամբ եղեռնից առաջ քաղաքում բնակվում էին շուրջ 30 տուն, 175 շունչ հայեր, որոնց մեծամասնությունը գաղթել էին Մալաթիայից ու Ամասիայից։

Գավառի համշենահայ գյուղերը.— Ալթուն-Օղլուն կամ Տերային գյուղը՝ 80 տուն, Գոյլուճ կամ Քոչին Արթինին գյուղը՝ 100, Լալա՝ 30, Սարբուլ՝ 25, Գյոլ Դաղի կամ Գյուլ Դաղի՝ 80 և Գարաջա Քեսե՝ 30. Ընդամենը՝ 6 գյուղ, 345 տուն, 2415 շունչ։

Գավառի հայ բոշաների գյուղերը.— Ալի բեկ՝ 90 տուն, Մարալ դաղ՝ 100, Ջինկյանլար խանե՝ 40։ Ընդամենը՝ 3 գյուղ, 230 տուն, 1610 շունչ։

---

40 Մ. Բ ժ շ կ յ ա ն, Պատմություն Պոնտոսի, էջ 49։ Թևպետ Բժշկյանն ու նրանից ընդօրինակող հեղինակները Խուռշունչի են անվանում այդ վայրը, սակայն բազմաթիվ բնիկների վկայությամբ, ինչպես և պաշտոնական գրություններում Կուրշումլի է անվանվում։ Թերևս տարիներ առաջ Խուռշունլի է կոչվել։

41 Գյումուշխանե ու Շեյրան քաղաքների վերաբերյալ վիճակագրական տվյալները վերցված են «Պատմություն հայկական Պոնտոսի» գրքից, էջ 531, 553։

42 Տե՛ս Մ. Է ս մ ե ր յ ա ն, Աքսորի ու պատերազմի կրակներու մեջեն, Բոստոն, 1952։

Ամբողջ գավառում՝ 4200 հայ, որոնցից 2415 համշենահայեր, 1610 հայ բոշաներ ու 175 քաղաքաբնակներ[43]։

Աղյուսակ 4

Տրապիզոնի նահանգի (Պոնտոս) հայերի թվաքանակը եղեռնից առաջ՝ 1914 թ.

Վարչական շրջաններ, քաղաքներ	Քաղաքներում		Գյուղերում						Ընդամենը շունչ
			համշենահայեր			ոչ համշենահայեր			
	տուն	շունչ	գյուղ	տուն	շունչ	գյուղ	տուն	շունչ	
Տրապիզոնի գավառ									
Տրապիզոն քաղաք . . .	—	14000	—	—	—	—	—	—	14000
Սյուրմենե գավառակ . .	—	—	10	106	996	—	—	—	996
Յոմուրայի վիճակ . . .	—	—	29	589	4123	—	—	—	4143
Ձեվիզլուի վիճակ	—	—	4	23	161	—	—	—	161
Վաղաքամերձ գյուղեր .	—	—	16	260	1820	—	—	—	1820
Ակչեասպատի (Պլաղանա) գավառակ	—	—	35	747	5229	—	—	—	5229
Պլաղանա քաղաք	—	72	—	—	—	—	—	—	72
Բեյուք լիման (Ֆոշ) . .	—	150	—	—	—	—	—	—	150
Էլեվի ավան	—	60	—	—	—	—	—	—	60
Տրիպոլի քաղաք	—	1500	—	—	—	—	—	—	1500
Կիրասոն քաղաք	—	3500	—	—	—	—	—	—	3500
Բուլանճըքի վիճակ . . .	—	—	—	—	—	1	75	525	525
Օրդուի գավառակ . . .	—	—	—	—	—	—	—	—	—
Օրդու քաղաք	—	4500	—	—	—	—	—	—	4500
Օրդուի գյուղեր	—	—	70	2214	15498	—	—	—	15498
Ընդամենը գավառում . .	—	23780	164	3939	27837	1	75	525	52142
Սամսոնի գավառ									
Սամսոն քաղաք	—	5000	—	—	—	—	—	—	5000
Ֆաթսա քաղաք	—	1800	—	—	—	—	—	—	1800
Ֆաթսայի գյուղեր . . .	—	—	12	460	3220	—	—	—	3220
Ունիե քաղաք	—	1500	—	—	—	—	—	—	1500
Ունիեի գյուղեր	—	—	32	1328	9296	—	—	—	9296
Թերմե քաղաք	—	660	—	—	—	—	—	—	660
Թերմեի գյուղեր	—	—	23	849	5943	—	—	—	5943
Զարշամպա քաղաք . . .	—	1800	62	2678	18746	—	—	—	20546
Բաֆրա քաղաք	—	2200	—	—	—	—	—	—	2200
Բաֆրա գյուղ	—	—	—	—	—	2	45	315	315
Կավախի վիճակ	—	—	—	—	—	—	—	500	500
Ընդամենը գավառում . .	—	12960	129	5315	37205	2	45	815	50980
Գյումուշխանեի գավառ									
Գյումուշխանե քաղաք .	—	960	—	—	—	—	—	—	960
Գյումուշխանեի գյուղեր	—	—	—	—	—	5	90	630	630
Գայլ դեա (Գելբիթ) քաղ.	—	720	—	—	—	—	—	—	720
Շեյրան քաղաք	—	300	—	—	—	1	20	140	440
Ընդամենը գավառում . .	—	1980	—	—	—	—	—	770	2750
Լազիստանի գավառ . .	—	—	—	50	300	—	—	—	300
Ամբողջ նահանգում . . .	—	38720	293	9304	65342	8	155	2110	106172

Նիկսարի գավառ

Օրդուի ու Ճանիկի համշենահայերից զգալի թվով ընտանիքներ, անցնելով սահմանակից Սեբաստիա նահանգը, հիմնել էին հետևյալ գյուղերը.

Նիկսար գավառի Մելեթ գավառակում. *Մահմադ՝ 120 տուն, Քյոյլի քյոյ՝ 40, Քելլեր՝ 50, Դարիջա՝ 40, Տերն Բաշի՝ 25, Բորսուդ՝ 35. ընդամենը՝ 6 գյուղ, 310 տուն, 2170 շունչ։*

---

43 *Սինոպի գավառի հայկական համայնքի մասին պատմել են Սառա Դեմիրչյանը, Նազիկ Գարա-Ալթինյանը, Հով. Քյուլյանը, Մարիամ Ոսկերիչյանը, Կարապետ Պահարյանը, Գևորգ Գալուճյանը։*

Հեյրեղ (Հրեշ) գավառակում. Շաքար Ջալ կամ Շահին Կայասի՝ 150 տուն, Էվադա՝ 140, Ջոլուշ՝ 120, Սարի Կայա. 150, Կերեսի՝ 130, Ջիբրաիլ՝ 60, Աղարաղ կամ Աղայաղի՝ 50։ Ընդամենը գավառակում՝ 7 գյուղ, 800 տուն, 5600 շունչ։

Ամբողջ նահանգում՝ 13 գյուղ, 1110 տուն, 7770 շունչ[44]։

Նիկոմեդիայի (Իզմիրի) գավառ

1860—1870-ական թթ. սկսվում է Օրդու գավառակի համշենահայերի գաղթը դեպի Սարմարա ծովի գեղանի ափերը՝ Ատաբազար ու Պարտիզակ (Բաղչեճուկ) գավառները։ Եղեռնի նախօրյակին այդ գավառներում կային հետևյալ համշենահայ գյուղերը.

Ատաբազար գավառում. Արամ կամ Կրզրլճուկ գյուղ, առաջին համշենահայ գյուղը Նիկոմեդիայում, հիմնված 1873 թ., ուներ 65 տուն բնակչություն, Գեղամ կամ Կովուք փելիթ իր 4 թաղերով՝ 112 տուն, Հովիվ գեղ (Ջոպան Յաթաղի)՝ 50, Խաչ գեղ (Մեջիտիե)՝ 40, Հայոց գեղ կամ ձոր (Սրթ գեղ) երեք թաղերով (Թեփե գեղ, Օրթա գեղ, Վերի գեղ)՝ 250, ընդամենը գավառում՝ 5 գյուղ, 517 տուն, 3619 շունչ։

Պարտիզակ (Բաղչեճուկ) գավառ. Մանուշակ (Մենեմշե) գյուղ, չորս թաղերով (Վերին թաղ, Վարի թաղ, Սուրաթում և Ալմասու)՝ 123 տուն, Ժոմուն գեղ (Քիլիսե Տյուղի)՝ 50, Ջաքար գեղ (Տյոշամա)՝ 120, Սուրբ՝ 30, Տուզլուխ՝ 7։ Ընդամենը գավառում՝ 5 գյուղ, 330 տուն, 2310 շունչ։ Ամբողջ Նիկոմեդիայում՝ 10 գյուղ, 847 տուն, 5929 շունչ[45]։

Աղյուսակ 5

Համշենահայերի թվաքանակը Արևմտյան Հայաստանում ու ամբողջ Թուրքիայում (առանց քաղաքների) 1914 թ.

Նահանգներ[46], գավառներ	Գյուղ	Տուն	Շունչ
Տրապիզոնի	293	9304	65344
Սինոպի	6	345	2415
Սեբաստիայի	13	1110	7770
Նիկոմեդիայի (Իզմիր)	10	847	5979
Ընդամենը...	322	11606	81458[47]

44 Մելեթ ու Հեյրեղ գավառակների համշենահայերի մասին պատմել են Մարկոս Բաղդասարյանը, Մեսրոպ Սահակյանը, Հակոբ Ավետիսյանը, Կարապետ Լոբյանը։ Սեբաստիա նահանգում գտնվող ուրիշ համշենահայ գյուղերի մասին տվյալներ չկան։

45 Նիկոմեդիայում բնակվող համշենահայերի մասին վիճակագրական ու ազգագրական տվյալներ հավաքելուն ու կազմելուն մասնակցություն են ունեցել Իսրայել Մինասյանը, Արմենակ Խորոզյանը, Գարեգին Գալստյանը, Գարեգին Վարդանյանը, Կարապետ Թարաքչյանը, Գարեգին Էմեքսուզյանը, Գալուստ Խաչիկյանը և ուրիշներ։ Օգտվել եմ նաև Մ. Գասպյանի (Ֆարհատ) «Հայերը Նիկոմեդիա գավառի մեջ» գրքից, Պարտիզակ, 1912։

46 Վարչական բաժանումները վերցվել են 1914 թ. դրությամբ։

47 Ինչպես ասվել է, հիմնվելով ստուգված վիճակագրական տվյալների վրա, համշենահայ գյուղացիների (խոսքը Պոնտոսում բնակվողների մասին է) ընտանիքների անդամների միջին թիվը 7 շունչ էր, որով 5-րդ աղյուսակում բերված 11606 տունը կունենար ոչ թե 81458, այլ 81242, այսինքն 216 շնչով պակաս։ Սակայն դա հետևանք է ոչ թե թույլ տրված թվաբանական սխալի, այլ իրական դրությունը ներկայացնելու միտումով է արվել։ Բանը նրանումն է, որ Սյուրմենեի (Սև գետ) հայկական համայնքի նախաեղեռնյան ժամանակամիջոցի թաղապետ ու դպրոցական հոգաբարձության նախագահ, եղեռնից փրկված Մինաս Մինասյանի աներկրա վկայությամբ, նույն ժամանակում իր կազմած ցուցակների համաձայն համայնքի 106 տունն ուներ 996 շունչ բնակչություն։ Ահա այդ թիվն է, որ թողնվել է անփոփոխ։

Բացի հիշված նահանգներից, համշենահայեր բնակվում էին նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրերում։ Ս. Հայկունու վկայությամբ, Սև գետի արյունալի օրերին, հայրենի օջախները լքած ու հեռացած սևգետցիների շուրջ 10 տոկոսը անցել է Բաբերդի կողմը։ Սակայն առայժմ ստույգ տեղեկություններ չկան, թե որտեղ են նրանք հիմնվել։ Հավաստի վկայություն կա միայն այն մասին, որ սյուրմենեցիների մի սերունդ հասել է Դանձակի (Կիրովաբադ) գավառ. նրանց հետնորդներին մինչև այսօր էլ սյուրմենեցիք են կոչում։